ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

ԹԵՄԱ *Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց*

ՀԵՂԻՆԱԿ *Հերմինե Ալավերդյան*

Քննարկվել, հավանության է արժանացել

_____

_____

մեթոդմիավորման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____ :

Մեթոդմիավորման նախագահ _____ *Անուշ Դաջունց*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Տնօրենի տեղակալ _____ *Սերգեյ Ավանեսյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց

«Քննադատական մտածողությունը» նոր մանկավարժական մոտեցում է: Ունենալով պատմական հին արմատներ՝ վերջին շրջանում այն ինքնուրույն զարգացում է ապրել և դարձել ժամանակակից առաջատար մանկավարժական տեխնոլոգիա:

Մեզ արդեն հայտնի է այս մոտեցման հունահռոմեական տարբերակները, հատկապես Սոկրատեսի առաջարկած ուսուցման «Էվրիստիկ» կամ սոկրատյան հարցադրումների մեթոդը: Կարելի է հիշատակել նաև Մարկոս Ֆաբիոս Քվինթիլիանոսի զարգացնող ուսուցման մոտեցումը, որը ձևակերպվում էր այսպես. «Պատանու գլուխը ոչ թե անոթ է, որը պետք է «լցնել» գիտելիքներով, այլ «ջահ է», որը պետք է վառել»: Մանկավարժական մտքի զարգացման ընթացքում այդ մոտեցումն ստացել է տարբեր արտահայտություններ և ընկալվել որպես աշակերտին ուսուցման գործընթացին ավելի գործուն մասնակից դարձնելու հայեցակարգային հիմք:

20-րդ դարում այս գաղափարներն ստացան նոր իմաստավորում, և ուղղվեցին մասնավորապես աշակերտներին որոնողական գործընթացի մասնակից դարձնելու նպատակի իրականացմանը: Դարասկզբին Հելլեն Պարքհեստի կողմից մշակվեց և Դալտոն քաղաքում կիրառվեց մի մոտեցում, որը կոչվեց «Դալտոն պլան»: Դրա իմաստն այն է, որ ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվում էր սովորողի ուսումնական աշխատանքը կազմակերպողի: Աշակերտն ինքնուրույն որոնողական աշխատանքի արդյունքում ձեռք էր բերում անհրաժեշտ գիտելիքներ: Խորհրդային տարիներին այս մոտեցումը տարածվեց որպես բրիգադ-լաբարատորային մեթոդ, որը կոչվում էր նաև թիմային աշխատանքի կատարում: Այսինքն՝ սովորողները ուսուցչի ղեկավարությամբ համատեղ աշխատանքի արդյունքում էին ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքները:

Տարբեր մանկավարժական դպրոցներում այս մոտեցումները ընթանում են տարբեր ուղղություններով, սակայն անփոփոխ է մնում հիմնական գաղափարը՝ աշակերտներին դարձնել ուսուցման գործընթացի մասնակից, ի հայտ բերել և ուսուցման ընթացքում զարգացնել նրա ներքին հնարավորությունները, ստեղծագործական մտածողությունը, սովորել սովորեցնել, ձևավորել հասարակության գործուն անդամ, որն ունի հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, իր տեսակետը հիմնավորելու, իր որոշումներն արժեքավորելու և պատասխանատվություն կրելու կարողություններ:

Այս նպատակներին հասնելու տեխնոլոգիաներից մեկն է քննադատական մտածողությունը: Այսօր մանկավարժական գրականության մեջ ձևավորվել են «քննադատական մտածողության» բազմաթիվ սահմանումներ, սակայն դեռ չի ձևավորվել բոլորի կողմից ընդունված որևէ սահմանման տարբերակ: «Քննադատական մտածողություն» գաղափարի ձևակերպման համար Դեյվիդ Քլուսթերը հիմք է ընդունել 4 հիմնական դրույթ.

1) Բոլոր երեխաներին ներհատուկ բնածին ընդունակությունների և արդյունավետ սովորելու կարողության առկայության գիտակցում:
2) Ստեղծագործաբար աշխատող ուսուցիչների դերի կարևորում:
3) Աշակերտների քննադատական մտածողության զարգացման անհրաժեշտության գիտակցում:
4) Գործուն ուսումնառության ապահովման կարևոր նախապայման է դասարանում ուսման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Այն ենթադրում է, որ աշակերտները, ելնելով իրենց բնական հետաքրքրություններից, կարողանում են կատարել ուսումնական որոնողական աշխատանքներ, փնտրել և ուսուցման նոր մեթոդների շնորհիվ ավելի արագ ու դյուրին ընկալել ուսումնական նյութը, գիտական ձեռքբերումներն օգտագործել ոչ թե սոսկ յուրացվելիք և մտապահվելիք ճշմարտություններ, այլ նորը ստեղծելու, գիտական հարցադրումները գիտակցելու և դրանց լուծումները որոնելու և գտնելու միջոցներ: Աշակերտներին օգնում են գտնելու նոր գիտելիքների և իր անձնական կենսափորձի միջև առկա փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը չմնա որպես տեսական գաղափարների պարզ մտապահում, այլ դառնա գործնական և կենսականորեն կիրառելի:

Ուսուցումն ընկալվում է որպես աշակերտակենտրոն գործընթաց: Ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխվում է ուսուցման սուբյեկտ-սուբյետ մոդելի: Դասարանում ուսումնական գործընթացի գլխավոր դերակատարն աշակերտն է, ուսուցիչը դադարում է լինել աշակերտների գիտելիքների միակ աղբյուրը: Նա դառնում է նրանց ուսումնառության և զարգացման գործընթացի ուղղորդողը: Ուսուցիչը ներկայանում է իբրև հետազոտող, փնտրող և լուծումներ գտնող անձ, ինչը խթանում է աշակերտների որոնողական աշխատանքը: Նա ոչ միայն աշակերտներին օգնում է ձեռք բերելու ինքնուրույն գիտելիքներ, այլև օրինակ է ծառայում, որպեսզի զարգանա ստեղծագործական միտքը:

1) Քննադատական մտածողությունն ինքնուրույն մտածողություն է: Երբ առաջադրանքները կառուցվում են քննադատական մտածողության հիման վրա, ապա սովորողի մոտ ձևավորվում է սեփական պատկերացումներ, գաղափարներ, ելնելով իր ուսումնառության հնարավորություններից: Արդյունքում նա ոչ միայն յուրացնում է ուսումնական նյութը, այլև զարգացնում է իր մտավոր հնարավորությունները: Այդ դեպքում նոր գիտելիքը գնահատվում է սովորողի կողմից և հիմք դառնում համոզմունքների ձևավորման համար: Ահա ինչու դասարանում անհրաժեշտ է ստեղծել ազատ, անկաշկանդ մթնոլորտ, որպեսզի սովորողները կարողանան մտածել և ինքնուրույն գտնել անգամ ամենաբարդ հարցերի լուծումները: Պետք չէ որ քննադատական մտածողությունը միշտ լինի ինքնատիպ: Ուսման ընթացքում սեփական կարող ենք ընդունել ուրիշների գաղափարներն ու համոզմունքները: Քննադատորեն մտածող մարդը առանց քննարկելու, բանավիճելու այնքան էլ հաճախ չի կիսում ուրիշի տեսակետը, քանի որ նրա մտածողության հիմքերը, ընթացքը, արդյունքները, վերահսկողությունը

սուբյեկտիվ են: Ինքնուրույնությունը քննադատական մտածողության առաջին և հավանաբար, ամենակարևոր բնութագիրն է:

2) Գիտելիքը ոչ թե քննադատական մտածողության արդյունքն է, այլ դրա խթանը կամ առաջին քայլը: Գիտելիքներն այն հիմքերն են, առանց որոնց մարդը չի կարող քննադատորել մտածել: Բարդ միտք ձևավորելու համար պետք է վերամշակել տեսությունների, փաստերի, գաղափարների, տվյալների ամբողջությունը: Քննադատական մտածողությունն օգնում է աշակերտներին ընկալելու ամենաբարդ հասկացությունները և մտապահել բազում տարբեր տեղեկություններ:

3) Քննադատական մտածողությունն սկսվում է հարցադրումներից և լուծվելիք հիմնախնդրի պարզաբանումից: Մարդն իր բնույթով հետաքրքրասեր է: Երբ մենք ինչ-որ նոր բան ենք տեսնում, ուզում ենք իմանալ ինչ է դա: Դասին նախապատրաստվելու համար մանկավարժը նախ պետք է որոշի ուսումնական խնդիրների ամբողջությունը: Երբ աշակերտները արդեն պատրաստեն դրանք ըմբռնելու, ուսուցիչը պարտավոր է օգնել, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն ձևակերպումներ կատարել: Ըստ հեղինակների քննադատական մտածողության շնորհիվ ուսուցումը փաստերի և գիտելիքների պարզմտապահումից և վերարտադրումից վերափոխվում է նպատակաուղղված, բովանդակալից գործունեության, որի ընթացքում աշակերտները կատարում են լուրջ մտավոր աշխատանք և հանգում կյանքի առաջադրած խնդիրների ճիշտ լուծմանը:

4) Քննադատական մտածողությունը պարտադիր կերպով պետք է տանի դեպի համոզիչ փաստարկների ձևավորում: Քննադատաբար մտածող մարդը գտնում է խնդրի սեփական լուծումները և կարողանում դրանք հիմնավորել տրամաբանությամբ ու փաստարկներով: Եվ եզրահանգողը գիտակցում է, որ հնարավոր են նույն խնդրի այլ լուծումներ: Եթե կա այդպիսի իրավիճակ, նա պետք է կարողանա հիմնավորել և ապացուցել լուծման իր տարբերակի առավելությունները:

5) Քննադատական մտածողությունն ունի նաև հասարակական ուղղվածություն: Քննադատական մտածողության արդյունքում ձևավորված յուրաքանչյուր միտք ստուգվում և ուղղվում է, երբ այն կիսվում է ուրիշների հետ: Վիճելիս, կարդալիս, քննարկելիս, ժխտելիս, հաստատելիս կամ կարծիքներ փոխանակելիս միաժամանակ ճնշում, հստակեցնում ենք սեփական դիրքորոշումը:

Մանկավարժական գործընթացում քննադատական մտածողության զարգացման սկզբունքները կիրառելիս մեծ ուշադրություն է դարձվում մտքերի արդյունավետ փոխանակման կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Քննադատական մտածողության զարգացման սկզբունքների կիրառման համար հնարավոր կարողություններն ու հմտություններն են.

- կարողանալ ուշադիր լսել ուրիշներին,

- համբերություն, հանդուրժողականություն դրսևորել դիմացինի և նրա գաղափարների նկատմամբ,
- պատասխանատվություն կրել սեփական կարծիքի համար:

Քննադատական մտածողությունն օգտագործվում է որոշումների կայացման, ձևավորման, գնահատման ու կանխորոշման, կարծիքների արտահայտման, տեսակետների մեկնաբանման ու արժևորման, քննարկումների՝ երկխոսությունների ու վիճաբանությունների անցկացման ու կոնֆլիկտների լուծման ժամանակ:

Քննադատական մտածողության բնորոշ գծերն են՝ հիմնավորվածությունը, խարհրդածականությունը, գնահատողականությունը և արդյունավետությունը: Քննադատական մտածողությունը սովորողների մոտ զարգացնում է խմբերում աշխատելու կարողություններ, տարբեր էթնիկ և սոցիալական ծագում ունեցող մարդկանց հարգելու կարողություններ, հավասար պայմաններում համագործակցելու, միևնույն ժամանակ ղեկավարելու, անձնական նախաձեռնություն ցուցաբերելու ունակություններ, միջառարկայական և ներառարկայական կապերի ձևավորման կարողություններ, գիտելիքն ստեղծագործաբար իմաստավորելու, ըստ նորության և կարևորության տեղեկատվությունը համակարգելու հմտություն: